

## ՀԱՅ ԿԵՆՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՅԻ

Ողջոյն Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. ՎԵՆԱՓԱՌ ԵՒ ՄԵՐԱՊՆԱԳՈՅՆ  
ԿԱՐՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈԅ.

Մարտի 13-ին Նորին Կայսերական Մեծութեանը հաճելի եղաւ ստորագրել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատման հրովարտակը և այդպիսով Բարձրագոյնս սանկցիա տալ համազգային ժողովի տիրական կամքին։ Այդ օրուանից Ամենապատիւ Տեղակալ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսը գառնում է Գէորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց և արժանաւոր ժառանգ Լուսաւորչի Վեհափառ և ալեղարդ գահին։

Ողջունում ենք Տ. Տ. Գէորգ Կաթողիկոսի համազգային ընտրութիւնն ու Բարձրագոյն հաստատութիւնը։ Ուրախ ենք ի սրտէ, որ այս անգամ ևս հայ ազգի ընտրական խօհեմութիւնը լաւապէս կշռադատելով ժամանակի և հասարակութեան բարդ յարաբերութիւնները, ի նկատի ունենալով իրանց լուծման սպասող մի շարք ծանր ու կարեւոր խնդիրներ—Ամենայն Հայոց հայրապետական գահին բազմեցրեց մի Հովուապետի, որ այդ խնդիրների բազմակողմանի, լուրջ ու խօհեմ ուսումնասիրութեան ու լուծման համար չի խնայելու Իւր հայրապետական բարձր ուշադրութիւնն ու նուիրապետական հեղինակութիւնը։ Ուրախ ենք սրտանց, որ այս անգամ ևս Ամենայն Հայոց Կաթողիկոսական գահի վրայ բազմող Հայրապետը գնալու է Իւր կեանքի ընթացքում սկզբունքաբարձրած ուղիով—գործել հայ կեանքի, հայ եկեղեցւոյ համար, ժողովրդի հետ, ժողովրդի աջակցութեամբ։

Համազգային հայրապետութեան մեծ ու բազմակողմանի ֆունկցիաներից մէկը — բացի կրօնական եկեղեցականից, դպրոցական խնդիրն է, որովհետև մանաւանդ մեզ ուսահայերիս կրթական դպրոցական գործը իրաւապէս

կապուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ, մտնում է նորա իրաւասութեան մէջ, գպրոցների տէրը ինքը—Ամենայն Հայոց Կաթողիկոսն է։

Ինչ կասկած, որ մեր ընդհանուր եկեղեցական կեանքի մէջ կան շատ կարեւոր և լուրջ խնդիրներ, որոնք կարօտ են նորոգութեան, բարեփոխութիւնների, տոկոսն աշխատանքի։ Բայց այդ բոլոր խնդիրներից ամենից կարեւորը գպրոցի գործն է, գրքի, գրականութեան, ուսման խնդիրը, որին այժմ ամենից առաջ և ամենից շատ կարիք ունի հայ ժողովուրդը և որին իրանց բարձր ուշադրութիւնը չեն զլացել էջմիածնի հայրապետները նաև մեր պատմութեան անցեալ դարերում։

Այսօր, նորընտիր և նորահաստատ Կաթողիկոսի այս հանդիսաւոր օրերին, երբ հայ ազգը Լուսաւորչի գահից վեր է բարձրացնում տրամաշուք քողը և ս. էջմիածնի մեղեդիանման զանգերը հինաւուրց հայրապետանոցի պատերից այդ ցնծութեան աւետիքը սփռում են աշխարհի ամեն կողմ, ուր հայ կայ և հայ կեանք—մի բախտաւոր զուգադիպութեամբ Հայոց ազգը պատրաստուած է աօնել իւր գրքի ու գրականութեան, իւր գպրոցի և կուլտուրայի նոր շրջանի չորսհարիւրամեայ պատկառելի յօրելեանը։

Սուրբ էջմիածնի Հայոց հայրապետութիւնը հայ ազգի աւեր ու արկւն օրերին, երբ սրակոտոր երկիրը անձի բացարձակ անապահաւթութեան, դոյքի և ունեցուածքի ակնյայտնի յափշտակութեան մէջ օրօրւում էր ու հեծում, երբ օսմանցի և պարսիկ իշխանների բռնութեան տակ ճնշուած անդգայացել, բթացել էր հայ ժողովրդի միտքն ու առաւել ևս կոտրը, այդ օրերին էր ահա, որ սուրբ էջմիածնի Ամենայն Հայոց հայրապետութիւնը՝ հուսատարիմ իւր անցեալ գործունէութեան—հոգ տարաւ ու իւր շուրջը հաւաքեց հայ գրքի, հայ գրականութեան հետաքրքիր մարդկանց ու համատարած խաւարի միջից մի նախանձելի եռանդով դեռ տպագրութեան վաղ օրերին հայ գրքի և ընթերցողի առաջ նոր և լայն տապարէզ բաց արաւ։ Ու երբ մեր երկրում դեռ շարունակւում էր ասպատակութիւնն ու անազատ



կեանքը, երբ օտար իշխանները մեր երկրին տիրանալու տենչով բռնուած իրար, դրա հետ միասին նաև մեր երկիրը յօշոտում էին, ու երբ կուլտուրական խաղաղ կեանքով ապրելու ոչ մի հնարաւորութիւն չէր մնացել—գարձեալ մերթ թափառաշրջիկ մերթ իրանց կիսաւեր գահերի վրայ բազմող հայրապետների հրամաններն ու ցանկութիւններն էին, որոնք թե էին տալիս էջմիածնի մարդկանց թռչելու աշխարհի զանազան կողմերը շարունակելու կուլտուրական մեծ գործը, յետագայ դարերի համար փրկելու մեր նախնիքների քաղաքակրթական խաղաղ աշխատանքի հետքերը։ Հայ գիրքը փրկւում է այդպիսով և դրա հետ միասին հայ սակաւաթիւ ընթերցողը—եւ վերջին դարերի համար, առաւել քան առաջ այդ վաստակը Ամենայն Հայոց Հայրապետութեան մեծ ու փառապանծ արժանիքն է, որ պատիւ է բերում այդ պատկառելի հաստատութեանը։

Հայ գրքին տալ ընթերցող, լուսաւորութիւնն ու կրթութիւնը տարածել, ընդհանրացնել հայութեան բոլոր խաւերի մէջ, բոլոր անկիւններում, այս հարցը մեր կեանքի ամենակարգինալ հարցերից է և արժանի առանձին թափով հրապարակ նետուելու, մանաւանդ այսօր երբ մենք այդ գրքի չորս դարեան կեանքն ենք պատրաստում տօնելու։ Այդ հարցի հիմնական դարմանը կարող է գալ դպրոցի միջոցով, բոլոր միւս առաջարկները մեզ թւում են պաշտօն տիւ, ուստի և ոչ արմատական։ Միմիայն հայ դպրոցի շատանալովը, տարածուելովը, հայութեան ամենախուլ անկիւններում տարածուելովն է, որ հնարաւոր է հայ ընթերցողների շարքերը բազմացնել, խտացնել և լեզէօններ դարձնել։

Հայ դպրոցը մեր պատմութեան ընթացքում եղել է դարեր շարունակ հայ հոգեւորականութեան ձեռքը, սա է ղեկավարել և ուղղութիւն ու տոն տուել հայ կուլտուրական—կրթական գործին—համարեա բացառապէս։ Այսօր ժամանակները փոխուել են ի հարկէ, այսօր հասարակութիւնն ինքն այլ ևս անտարբեր չէ դէպի իւր կրթական գործը, հասարակական ինքնօգնութիւնը խոշոր քայլեր է անում և



բոլոր նշանները ցոյց են տալիս, որ նա այդ ուղղութեամբ մեծ յառաջագիժութիւն է անելու:

Սակայն խնդիրը ըստ էութեան չէ փոխուում: Այսօր ևս, և այսօր աւելի քան առաջ, հայ դպրոցի հիմնարկութեան, կազմութեան, ձևաւորման, հայ դպրոցը բանալու և փակելու իրաւունքը պատկանում է Ամենայն Հայոց Կաթողիկոսութեանը: Սորա բարձր հովանաւորութեան տակ է գտնուում դպրոցական գործն ամբողջապէս Պարզ և հասկանալի է, որ դպրոցական գործի արագ, կանոնաւոր, լուսամիտ ընթացքի համար էջմիածնի բարձր հսկողութիւնը և բանիմաց ղեկավարութիւնը կենսական կարևորութիւն պիտի ունենայ, ինչպէս և ունի մեր հասարակական կեանքի համար:

Սուրբ էջմիածինը իր գոյութեան օրից իւր ձեռքումն է ունեցել հայ ազգի կաւտուրական դպրոցական գործը. դարեր շարունակ նա ղեկավարել և գոյն է տուել այդ կեանքին: Ու նա այսօր ոչ միայն չի հրաժարուում օգնելու և քաջալերելու այդ կեանքը և նրա դպրոցական, կրթական գործը, այլ եղած հնարաւոր միջոցներով աջակցում է կրթական գործը լուսամիտ սկզբունքների վրայ դնել, տարածել հայ դպրոցը ամենուրեք, ուր հայ կայ և ապահովել նորա կեանքը:

Ամենազօրեղ կապերից մէկը, որով այսօրուայ հայ հասարակութիւնը կապուած է զգում իրան էջմիածնի, Ամենայն Հայոց Հայրապետութեան հետ—դա անշուշտ կրօնականի կողքին հայ դպրոցական—կրթական գործն է. Այդ զօրեղ կապը ամենից պայծառ և ցայտուն կերպով այսօր է գիտակցուում, երբ հայ ազգը պատրաստուում է տօնել իւր չորս դարեան գրքի յորելեանը, երբ նրա մտքում մի անգամ ևս գալիս անցնում են հայ բախտի, հայ ճակատագրի վիճակները և էջմիածնի կատարած դերը այդ վայրի օրերին, ու այս տարին՝ ներկան անխղելի կերպով կապուում է անցեալ տարիների, դարերի հետ, ու գիտակցում ենք, որ մի պատմութեան, միատեսակ պատմական գործունէութեան արդիւնք ենք, միատեսակ գործօնների հետեւանք: Անցեալ դարերի երկար շղթայի մեզ հասնող ծայրին մեր մտքի,

երևակայութեան մէջ կապուում են ապագայի օրերը—նոյն-  
պիսի և աւելի լաւ ակնկալումներով, յոյսերով, երբ մեր  
ազգի կուտուրական, կրթական քայլերն աւելի կարագա-  
նան, կեանքի զարկերակը աւելի մեծ թափով կը բարախիւ-  
նու այդ վառ յուսով լցուած, թէ այսուհետեւ ևս էջմիածնի  
Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը բաղմամբիւ խնդիրների  
կողքին յատկապէս դպրոցական գործին ևս կընծայի իւր  
քարձր ուշադրութիւնն ու հսկողութիւնը, որ կապահովի  
այդ գործը և կընդարձակի—ժամանակի լուսաւոր և ան-  
կաշկանդ պահանջների համեմատ, գործի կոչելով հաս-  
րակական աւելի լայն խաւերի և նրանց աջակցութեամբ  
ու գործակցութեամբ կազատի հայ գիւրքը իր դարաւոր  
նահատակութիւնից—որով և փառաւորապէս տօնած կըլինի  
հայ գրքի այդ համազգային պանծալի յորելեանը—ահա այդ  
ջերմ հաւատով ողջունում ենք նորընտիր և նորահաստատ  
Տ. Տ. Գէորգ ե. Վեհափառ Կաթողիկոսին—ցանկանալով  
Նորան երկար կեանք և առողջութիւն իմաստնագոյն կեր-  
պով վարելու մեր ազգային-եկեղեցական բովանդակ գոր-  
ծերը:

Գ. Ալթունեան.